

Ա. 2. ԳԱՐԻՆԵԼՅԱՆ

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 1987 Թ.
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Հաշվետու զեկուցում ՀՍՍՀ ԳԱ փմիական և երկրառանական
գիտությունների բաժանմունքի սեկցիայի ընդհանուր ժողովում՝
10.05.88 թ.)

Կուսակցական ու կառավարական վերջին տարիներին ընդունված ու
րոշումների լույսի տակ (վերակառուցում, հրապարակայնություն, դեմոկրա-
տացում) լուրջ վերափոխումներ են կատարվել նաև գիտության բնագավա-
րում: Նոր կարգ է սահմանվել գիտական հաստատությունների, ինստիտուտ-
ների, բաժինների ու լաբորատորիաների ղեկավար կազմի ընտրությունների,
երիտասարդ կադրերի առաջ քաշման, ինչպես նաև ինստիտուտների կառույ-
վածքի վերանայման ու աշխատակիցների ատեստավորման վերաբերյալ: Այդ
վերափոխումների նպատակն է գիտական հետազոտությունները դարձնել ավե-
լի նպատակասլաց, որպեսզի դրանք ուղղված լինեն առավել կարևոր, հե-
ռանկարային, գիտական ու ժողովրդա-տնտեսական արդիական պրոբլեմ-
ների լուծմանը:

Այդ տեսակետից կարևոր էր 1987 թ. մայիսին տեղի ունեցած մեր ա-
կադեմիայի նախագահության նիստը, որին մասնակցում էին համամիու-
թենական ակադեմիայի պրեզիդենտ Գ. Ի. Մարչուկը և հանրապետության
ղեկավարները: Պրեզիդենտ Մարչուկի զեկուցման մեջ և ելույթներում քնն-
նարկվեցին վերակառուցման հետ կապված մեր առջև դրված խնդիրները և
նշվեցին նախագահության, բաժանմունքների և ինստիտուտների անելիք-
ները: Միութենական ակադեմիա են ուղարկվել գիտական հետազոտությու-
նների առաջնային ուղղությունները, որոնք պետք է մշակվեն մեր հանրա-
պետական ակադեմիայում:

Հաշվետու ժամանակաշրջանում սեկցիայի նիստերում քննարկվել են
բազմաթիվ գիտական ու գիտակազմակերպական հարցեր, այդ թվում և
հարցեր, որոնք առաջադրվել են վերադաս կառավարական ու գիտական
օրգանների կողմից: Քննարկվել են 1987 և 1988 թվականների, 1987—2005
և մինչև 2010 թվականների կոնկրետ ու հեռանկարային պլանները, ներ-
դրման պլանները: Մինիստրների խորհրդի հանձնարարությամբ կազմված է
մինչև 1990 թ. հանրապետության ընդերքում ստորերկրյա ջերմային ու
սուրսների հայտնաբերման ու նրանց օգտագործման ուղղությամբ ծրագրվող
հետազոտությունների պլանը:

Կոորդինացիոն խորհրդի հետ համատեղ կազմվել և հրատարակվել են
երկրաբանական ու երկրաֆիզիկական գիտությունների գծով հանրապետու-
թյունում տարվող մի քանի կարևոր պրոբլեմների համար համատեղ աշ-
խատանքների կոորդինացիոն պլան: Նշված են պրոբլեմների ղեկավար-
ները, որոնք պետք է հսկեն, համաձայնեցնեն, ղեկավարեն այդ հետազո-
տությունները, սակայն ցավոք՝ սրտի նրանք այդ պլանների տակ ստորա-
գրելուց հեռու չեն գնում:

Նոր կարգի համաձայն թարմացված է «Գիտություններ երկրի մասին»
տեղեկագրի խմբագրական կոլեգիայի կազմը: Ըստ այդ կարգի կոլեգիայի
անդամները միայն 2 անգամ 5-ական տարով կարող են ընտրվել կոլեգիա-
յի կազմում: Այդ սկզբունքով որոշ ընկերներ, որոնք 10 տարուց ավելի են

աշխատում խմբագրական կոլեգիայում, փոխարինվել են այլ ընկերներով:

Սեկցիայի աշխատանքներում զգալի տեղ է դրավել վերագառ օրգանների առաջարկություններին և որոշումներին վերաբերող հարցերի քննարկումը և համապատասխան միջոցառումների մշակումը: Մինիստրների խորհրդի կողմից մեզ հանձնարարվել էր առաջարկներ ներկայացնել և որոշման նախագիծ կազմել երկրաշարժերի կանխագուշակման և սեյսմակայուն շինարարության ուղղությամբ հանրապետությունում տարվող աշխատանքների վիճակի և բարելավման միջոցառումների հարցի մասին, որը պետք է քննարկվի ամենամոտ ժամանակներում: Դեռ մի քանի ամիս առաջ մեր առաջարկները ներկայացվեցին Մինիստրների խորհուրդ:

Քննարկվել են երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի գիտական ու գիտակազմակերպական գործունեության ստուգման արդյունքները: Այդ հարցը հետագայում քննարկվեց նաև նախագահությունում:

Ինստիտուտում կատարված դրական աշխատանքների կողքին նշվեցին նաև տեղ գտած թերությունները (անբավարար համագործակցությունը երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ, տեսական երկրաֆիզիկայի թույլ զարգացումը և այլն) և նշվեցին աշխատանքների բարելավման ուղիներ:

Վերջերս քննարկվեց Երևան քաղաքի սեյսմիկ միկրոշրջանացման նոր քարտեզը, որը պետք է նորմատիվ փաստաթուղթ համարվի շինարարական կազմակերպությունների համար: Քննարկմանը մասնակցում էին սեյսմաշրջանացման և սեյսմակայուն շինարարության գծով համարյա բոլոր մասնագետները, որոնք նշեցին երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի կողմից կազմված քարտեզում (Ս. Ա. Փիրուզյան) եղած որոշ թերությունները և առաջարկվեց դրանք վերադնելուց հետո այն հանձնել Պետշինին:

Քննարկվեց Մինիստրների խորհրդի առաջարկությամբ Արարատյան արտեզյան ավազանի ջրերի և լավային ծածկոցների տակ թաղված գետահովիտներով հոսող ջրերի ռացիոնալ օգտագործման հարցը (պրոֆ. Ս. Բալյանի առաջարկությունները) և մեր կարծիքը այդ հարցի մասին ուղարկեցինք Մինիստրների խորհուրդ: Վերագառ օրգանների կողմից սահմանված կարգով տեղի ունեցան դիրեկտորի ընտրությունները: Ձեռք արդեն հայտնի են ընտրությունների արդյունքները: Երկրաբանական գիտությունների ինստիտուտի դիրեկտոր ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Վ. Գրիգորյանը, իսկ լենինականի երկրաֆիզիկայի ու ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի դիրեկտորի ընտրությունը տեղի կունենա ամենամոտ ժամանակներում:

Գիտական հետազոտությունների հիմնական արդյունքներ

Հաշվետու ժամանակաշրջանում մեր գիտական հաստատություններն ու գիտաարտադրական կազմակերպությունները զգալի նվաճումներ են ձեռք բերել հանրապետության ընդերքի ուսումնասիրման ասպարեզում:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հետազոտություններ են կատարվել 12 պրոբլեմների (28 թեմա) գծով, որոնք ընդգրկում են հանրապետության ռեզիոնալ երկրաբանության ու ֆիզիկական աշխարհագրության հիմնական ուղղությունները՝ շերտագրությունն ու տեկտոնիկան, մագմատիզմն ու օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափությունները, երկրաքիմիան, ինժեներային երկրաբանությունն ու ջրաերկրաբանությունը, ֆիզիկական աշխարհագրությունը:

Ինստիտուտը մասնակցել է համամիութենական երկու գիտասուխնի-կական և միջազգային երեք գիտական պրոբլեմների մշակմանը, համատեղ հետազոտություններ է կատարում հանրապետության գիտական ու արտա-դրական կազմակերպությունների հետ:

Ղեկավար օրգանների հանձնարարությամբ մի շարք եզրակացություն-ներ են արվել ժողովրդատնտեսական օբյեկտների ինժեներակրաբանական սլայդանների վերաբերյալ:

Նշենք կատարված աշխատանքներից մի քանիսը:

Կազմվել է հանրապետության հարավային մասի լինեամենտային տեկ-սոնական քարտեզի մակետը, հրատարակման է նախապատրաստվել Կոմ-կասի և հարակից շրջանների սիեզերատեկտոնական քարտեզը:

Օֆիոլիտային ղոնաների ուսումնասիրման շնորհիվ հայտնաբերվել են հազվագյուտ տարրերի բարձր պարունակությամբ լամպրոիտային սերիայի հրաբխային ապարներ:

Կազմվել են ՀՍՍՀ տարածքի կավճի ու պալեոգենի նստվածքների տար-բեր ղոնաների շերտագրական սխեմաներ, շարունակվել են նավթ ու գազ հայտնաբերելու նպատակով փորվող հորատանցքերից ստացված ապար-ների քարաբանա-շերտագրական ու բիտումինոլոգիական հետազոտությու-նները: Սկսվել են Հունգարական ժողովրդական հանրապետության հետ երի-տասարդ (պլիոցեն-չորրորդական) հրաբխային գոյացումների իզոտոպա-երկ-րաժամանակագրական հետազոտությունները: Նախնական տվյալներ են ստացվել Մերձերևանյան շրջանի հրաբխաքարերի տարեգրման վերաբերյալ:

Պարզաբանված են որոշ հանքաքեր տեղամասերում օգտակար հանա-ծոների առաջացման ու տեղաբաշխման միներալա-երկրաբիմիական և երկ-րաբանակառուցվածքային առանձնահատկությունները, կազմվել են կանխա-դուշակային մետաղագոյացման քարտեզներ (որոշ տեղամասերի համար), ա-ռանձնացվել են հեռանկարային հատվածները: Կազմվել է Աղստե գետի ա-վազանի և Հրազդան-Իջևան երկաթգծին հարող տեղամասերի ջրաերկրա-բանական քարտեզներ:

Ուսումնասիրվել ու դասակարգվել են Հայաստանի կենտրոնական հրա-բխային բարձրավանդակի ուլիեֆի երկրաձևաբանական տիպերը, կազմը-վել են Արագած ու Գեղամա դանգվածների խոշոր մասշտաբի երկրաձևա-բանական քարտեզներ, ավարտվել են ՀՍՍՀ բնական հուշարձանների փաս-տագրման աշխատանքները:

Ղափանի մետալուրգիական լաբորատորիայում շարունակվել են հետա-զոտությունները էլեկտրաբիմիական եղանակով սուլֆիդային պղինձ-երկա-թային անոդների էլեկտրոլիզի ճանապարհով պղինձային փոշու ստացման, մոլիբդենային հարստանյութերի համալիր վերամշակման ուղղությամբ իսաարտադրական փորձարկումները:

Կազմված է Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատում էլեկ-տրաբիմիական եղանակով պղինձային փոշու ստացման փորձնական աշ-խատանքների նախագիծը:

Մշակվել է շրջակա միջավայրի պահպանման, և բնական ուսուրանների հաշվենկատ օգտագործման համալիր նպատակային ծրագիր, որում տրված է էկոլոգիական ու անտրոպոգենային վիճակի բնութագիրը մեր հանրապետու-թյունում և ուրվագծված է հետագա հետազոտությունների ուղղությունը:

Ինստիտուտը բավարար աշխատանքներ է կատարել տեղում գիտական նստաշրջաններ կազմակերպելու գործում և ակտիվ մասնակցություն է ցու-ցաբերել այլ քաղաքներում տեղի ունեցած գիտաժողովներին: Արժանի է հի-շատակման ականավոր հայ երկրաբան Վարդան Լուդունիկովի ծննդյան 100-

ամյակին նվիրված ՍՍՀՄ ԳԱ միջգերատեսչական ապարարական կոմիտեի արտագնաց նստաշրջանը նրանում: Այդ նստաշրջանում մեր ինստիտուտի աշխատողների կողմից լավեցին մի շարք հետաքրքիր, ապարագիտությանը վերաբերվող գեկուցումներ, որոնք կրկին ապացույցեցին, որ գիտության այդ բնագավառում մեր հանրապետությունն առաջավոր դիրքերում է գտնվում:

Կադմակերպվեց նաև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 50-ամյակին նվիրված նստաշրջան:

Բավական ակտիվ են եղել ինստիտուտի միջազգային գիտական կապերը, մի շարք գիտաշխատողներ այցելել են Գերմանիայի գեմոկրատական հանրապետություն, Չեխոսլովակիա, Հունգարիա և համատեղ հետազոտություններ կատարել:

Չորս արտասահմանյան գիտնականներ այցելել են Հայաստան, և հանգես եկել գիտական գեկուցումներով, պրուցներ են ունեցել մեր գիտաշխատողների հետ և դաշտային հետազոտություններ կատարել:

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից եկած, Ինժեներային երկրաբանության միջազգային ընկերության պրեզիդենտ, պրոֆ. Հանգերր հետաքրքիր դրույց ունեցավ մեր բաժանմունքի ընկերների հետ, ինչպես նաև գեկուցում կարդաց երկրաբանության ինստիտուտում: Զրույցի ընթացքում նա արտահայտեց այն կարծիքը, որ ատոմակայանների շահագործումից ստացվող թափոնների թաղումը սեյսմակտիվ վայրերում, որտեղ կան նաև հանգած հրաբուխներ և արտեզյան ջրեր, անթույլատրելի է: Առավել հետաքրքիր էր պրոֆ. Հանգերի հաղորդումը այն մասին, որ իրենց մոտ՝ ԳՖՀ-ում օրենքը արգելում է ատոմային էլեկտրակայանների կառուցումը առանց ռադիոակտիվ թափոնների պահեստարանի նախագծի հաստատման: Իսկ մեզ մոտ ատոմակայանը կառուցվում է, շահագործվում է բազում տարիներ, և հետո միայն սկսում են մտածել թափոնների թաղման մասին: Ինստիտուտում եղան նաև Վիեննայի բնագիտական թանգարանի հնեաբանության բաժնի վարիչ, կավճի փորոտանիների հայտնի մասնագետ դոկտոր Հ. Կոլլմանը, ինչպես նաև հունգարացի պալեոպենի ճանաչված գիտնականներ Տ. Կեչկեմետին և Հ. Պալֆին: Նրանք ծանոթացան կավճի ու պալեոգենի հավաքածուների հետ և մեր մասնագետների ուղեկցությամբ դաշտային հետազոտություններ կատարեցին:

Նվաճումներ կան կադրերի պատրաստման ապարեզում, 3 դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել ինստիտուտի աշխատողները, հրատարակվել են 8 մենագրություններ և գիտական ամսագրերում տպագրվել 100-ից ավելի հոդվածներ, հրատարակման են ներկայացվել մի շարք մենագրություններ:

Անբավարար է վիճակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Թվում է, թե եթե 3 հոգի դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել, ապա առնվազն 10 երիտասարդներ էլ պետք է, որ թեկնածուական դիսերտացիաներ պաշտպանեն: Բայց ես չեմ հիշում, թե վերջին տարիներում ինստիտուտից քանիսն են թեկնածուական դիսերտացիաներ պաշտպանել: Ստացվում է, որ սրակավորվում են միջին ու ավագ սերնդի ներկայացուցիչները, իսկ երիտասարդները (մինչև 30—40 տարեկանները)՝ ոչ:

Կադրերի պատրաստումը իրականացվում է հիմնականում ասպիրանտուրայի միջոցով (տեղական և նպաստակալն), բայց հասկանալի է, թե ինչու ինստիտուտը երբեմն կադրեր է պատրաստում այնպիսի մասնագիտությունների պծով, որը կարող էր իրագործվել մեր այլ ակադեմիական հիմնարկներում (երկրաֆիզիկա, օդատար հանածոների որոնման ու հետախուզման երկրաֆիզիկական մեթոդներ):

Սրկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում հետազոտություններ են կատարվել 4 պրոբլեմների (24 թեմա) գծով: Հաշվետու տարում ինստիտուտի կարևոր գիտական նվաճումներից մեկը տեսական երկրաֆիզիկայի բնագավառում գիտական նոր ուղղության՝ գրավիշափության հակադարձ հեռաչափ խնդիրների լուծման մեթոդի ստեղծումն է: Այս մեթոդի հիման վրա կազմված ծրագրերի օգնությամբ կարելի է ավելի ճշգրիտ վերարտադրել միջավայրի երկրաբանա-երկրաֆիզիկական մոդելը: Մեթոդի արդյունավետությունը գործնականորեն արդարացվել է: Տեսական արդյունքները համընդհանուր բնույթ ունեն և դրանք կարելի է տարածել մյուս երկրաֆիզիկական մեթոդների վրա (սեյսմաբանական, էլեկտրամագնիսական և այլն):

Ամփոփվել են հանրապետության ու հարակից շրջանների մետաղային հանքավայրերի երկրաֆիզիկական ուսումնասիրման արդյունքները, հանքավայրերի տարբեր տիպերի համար մշակվել են որոնման ու հետախուզման ռացիոնալ մեթոդներ:

Կազմվել են Երևան քաղաքի և Մադկաձոր ավանի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզները, ընդ որում Երևանի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը քննարկվել է բաժանմունքի ընդլայնված նիստում և ապա միայն հանձնվել Պետշինին: Վերջերս այդ մասին զեկուցում կարդաց Ս. Փիրուզյանը նախագահությունում:

Սեյսմակտիվ շրջաններում դիտվել են ծանրության ուժի բաբախման բնույթի ինտենսիվ ոչ մակրնթացային փոփոխություններ, որոնք հավանաբար կապված են խորքային բեկվածքներում տեղի ունեցող երկրադինամիկական պրոցեսների հետ: Մշակված է մեթոդիկա, որը հնարավորություն է տալիս գրանցելու երկրաշարժերից առաջ էլեկտրահաղորդականության փոփոխությունները:

Անդրկովկասյան ինստիտուտների և երկրագնդի ֆիզիկայի ինստիտուտի մասնագետների հետ համատեղ, սեյսմաբանական տվյալների հիման վրա կազմված է Կովկասում 1988—1990 թթ. սպասվող ուժեղ երկրաշարժերի քարտեզը:

Վերլուծելով ֆիզիկական դաշտերի անոմալիաները, ցույց է տրված, որ երկայնակի ալիքների արագությունների փոփոխությունները 150—200 կմ խորություններում, այսինքն մանթիայի (պատյանի) վերին հորիզոններում, նույնքան բարդ ու տարբեր են, որքան երկրակեղևը ստորին շերտերում: Դրավիաչափական տվյալներով կազմվել է հանրապետության տարածքի կենտրոնական մասի բյուրեղային հիմքի մակերևույթի քարտեզը:

Նոր տվյալներ են ստացվել Գեղարդի և Հացավանի սողանքների կառուցվածքի ու դինամիկայի վերաբերյալ, շարունակվել են հետազոտությունները լանջերի խորքային սողքի տեսության զարգացման բնագավառում: Ճշտվել է Մարմարիկի ջրամբարի տարածքում սպասվող երկրաշարժերի էլակետային սւժ-աստիճանը:

Զգալի նվաճումներ կան ներդրման բնագավառում (սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզներ՝ Երևան, Մադկաձոր, Մարմարիկի ջրամբարի սեյսմիկ պայմանների գնահատումը, ՀՍՍՀ խորքային բեկվածքների քարտեզը՝ ըստ երկրաֆիզիկական տվյալների, հանքային մարմինների որոնման, հայտնաբերման նոր մեթոդներ, նոր սարք ապարների ու հանքանյութերի ֆիզիկական հատկությունների ուսումնասիրման համար և այլն): Դրական սլաստասխաններ են ստացվել գյուտարարական շորս հայտերի համար, քննարկման պրոցեսում են 10 հայտեր:

Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը լուրջ նվաճումներ ունի բարձրորակ կադրերի պատրաստման բնագավառում:

Թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել 5 գիտաշխատողներ (Համալսարանում ստեղծված դիսերտացիաների պաշտպանության խորհրդում մինչև այժմ միայն երկրաֆիզիկոսներն են պաշտպանում) և մեկ ընկեր (Ս. Հովհաննիսյան) դոկտորական, մի քանի ընկերներ էլ դոկտորական դիսերտացիաներ արդեն ներկայացրել են պաշտպանության: Այնպես, որ ամեն ինչ հաջող ընթանալու դեպքում շուտով երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում զգալի թվով դոկտորներ կլինեն: Բավականին ակտիվ է եղել ինստիտուտի գիտական կապերը Միության մյուս ինստիտուտների և արտասահմանյան երկրների հետ: Լենինականում հաշվետու տարում հրավիրվել է համամիութենական սեմինար «Երկրի մագնիսական դաշտի նուրբ կառուցվածքը և կայնոզոյի մագնիսաշերտադրությունը» թեմայով, որտեղ հետաքրքիր զեկուցումներ են կարդացել նաև մեր երկրաֆիզիկոսները:

Ինստիտուտի աշխատակիցերը մասնակցել են նաև երկրի տարբեր քաղաքներում և արտասահմանում կազմակերպված սեմինարների, խորհրդակցությունների, կոնգրեսների: Ինստիտուտը շարունակել է սերտ գիտական համագործակցությունը Մոսկվայի (ԵՖՍ), Ուկրաինայի, Վրաստանի ու Ադրբեջանի գիտական հաստատությունների հետ: Հրատարակվել է 4 մենագրություն, ևս շորս աշխատություններ տպագրության են հանձնվել, շուրջ 100 հոգվածներ հրատարակվել են գիտական տեղեկագրերում:

Ցավոք սրտի այս տարի շատ քիչ տեղեկություններ ստացանք հանրապետության մյուս, արտաակադեմիական գիտական ու արտադրական հաստատություններից ու բուհերից իրենց կատարած աշխատանքների մասին: Չնայած, գիտենք, որ նրանցում նույնպես հետաքրքիր գործեր են արվում, սակայն պաշտոնական տվյալներ չունենալու պատճառով ես նրանց գործունեությանը չեմ անդրադառնա:

Տվյալներ ունենք միայն ՀՍՍՀ Պետշինի Շինարարության ու ճարտարապետության գիտահետազոտական ինստիտուտից, որը համապատասխան վերադաս օրգանների որոշմամբ գիտամեթոդական տեսակետից ենթակա է նաև մեր ակադեմիային: Բայց տեղին է նշել, որ մենք դեռ սերտ գիտական համագործակցություն չենք ստեղծել այդ ինստիտուտի և ակադեմիայի միջև: Անհրաժեշտ է կազմել համագործակցության պլան և այն քննարկել ու հաստատել ինստիտուտի գիտական խորհրդի ու երկրի մասին գիտությունների սեկցիայի համատեղ նիստում: Այդ մասին խոսել ենք, մտածել, բայց ոեւալ քայլեր դեռ չենք կատարել: Ինստիտուտի 1987 թ. թեմատիկ պլանը ընդգրկում է 4 համամիութենական գիտատեխնիկական և մեկ հանրապետական ծրագրեր:

Այդ ծրագրերից անմիջականորեն մեր սեկցիայի հետ առնչվում է Օ.74.03 ծրագիրը, որի բնագավառում հետազոտություններ են տարվում մեր ակադեմիայի ինստիտուտներում և այլ միջգերատեսչային հաստատություններում: Հուրջ արդյունքներ են ստացվել սեյսմակայուն շինարարության տեսական ու գործնական խնդիրների մշակման առարկերում: Դրուկան որոշումներ են ստացվել 8 գյուտարարական հայտերի համար, ներկայացված է եղել 17-ը: Ինստիտուտի մեկ աշխատանք (5 հեղինակներ) արտոնագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում և արտոնագրվում է միջաբա ալլ արտասահմանյան երկրներում: Ինստիտուտը սերտ գիտական կապեր ունի մի շարք արտասահմանյան երկրների հետ (ԱՄՆ, Բուլղարիա, Հունգարիա և այլն):

Որոշ տեղեկություններ մեզ հաղորդեցին Համալսարանի աշխարհագրական ֆակուլտետից:

Ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը հետազոտություններ է կատարել մարդածին գործոնների ազդեցության տակ բնական լանդշաֆտների կրած փոփոխությունների վերաբերյալ Շիրակի ֆիզիկա-աշխարհագրական շրջանում: Նշվում է, որ մարդու տնտեսական գործունեության հետևանքով, հատկապես արոտավայրերի անկանոն օգտագործմամբ նոր սելավային շջախներ են գոյացել Արագածի, Ջավախքի, Շիրակի և հանրապետության մյուս լեռների ու հրաբխային զանգվածների լանջերին: Այդ կապակցությամբ ուշադրության արժանի առաջարկ է արվում լանջերի հատուկ ուսումնասիրություն կազմակերպելու, որն, իհարկե, շատ կարևոր է բնության պահպանման և տնտեսական նշանակություն ունեցող հարցերի լուծման համար: Երկրաձևաբանության ու երկրաձևաչափության ամբիոնը պրոֆ. Ս. Պ. Բալյանի ղեկավարությամբ շարունակել է հետազոտությունները հրաբխային շրջաններում լավային ծածկույթների տակ թաղված գետահովիտների հայտնաբերման և դրանցով հոսող ջրերի օգտագործման ուղղությամբ: Վերջերս այդ հարցը կառավարության հանձնարարությամբ քննարկվեց մեր բաժանմունքին կից ինժեներային երկրաբանության ու ջրաերկրաբանության պրոֆ. Լեմային գիտական խորհրդում և հավանության արժանացավ:

Պրոբլեմային գիտական խորհուրդների գործունեության մասին

Կոորդինացիոն գիտական խորհուրդները որոշ չափով վերակառուցվել են և ավելի նեղ մասնագիտական բնույթ են կրում, այսինքն, նրանք վերածվել են պրոբլեմային գիտական միավորումների, որոնք կոչված են կոորդինացնելու և որոշելու տվյալ բնագավառում տարվող հետազոտությունները հանրապետությունում:

Մեր սեկցիայի կազմում այժմ գործում են այդ տիպի 4 խորհուրդներ՝ ինժեներային երկրաբանություն ու ջրաերկրաբանություն (երկու սեկցիաներով), սելավային երևույթների դեմ պայքարելու խորհուրդ, սեյսմաբանություն ու ինժեներային սեյսմաբանություն և երկրաշարժերի կանխագուշակման խորհուրդներ:

Բավական ահտիվ է գործում ինժեներային երկրաբանության ու ջրաերկրաբանության խորհուրդը: Խորհուրդը քննարկել և համապատասխան առաջարկություններ է արել այնպիսի կարևոր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ռադիոակտիվ թափոնների թաղումը, Կապսի ջրամբարի ինժեներաերկրաբանական պայմանները, Կուսակցության կենտրոնական կոմիտե և կառավարությանն են ուղարկվել առաջարկություններ հանրապետության տարածքում ինժեներաերկրաբանական ծառայության վիճակի ու նրա բարելավման մասին: Խորհուրդը քննարկել ու հաստատել է նաև ինժեներային երկրաբանության բնագավառում 1988 թ. տարվող աշխատանքների կոորդինացիոն պլանը:

Սեյսմաբանության ու սեյսմակայուն շինարարության խորհուրդը (Բ. Կ. Կարապետյան) քննարկել ու համաձայնացրել է այդ բնագավառում հանրապետությունում տարվող գիտական հետազոտությունները, խորհրդի 2 անդամներ (Կարապետյան, Խաչյան) եղել են Միացյալ Նահանգներում, աշխատանքային փորձի փոխանակում կատարել համապատասխան գիտական հաստատությունների հետ, գիտական հետազոտություններ են կատարել և հանդես եկել գիտական զեկուցումներով այդ առարկայի մեջ մոտ տարվող աշխատանքների մասին: Խորհրդի անդամները ղգալի օգնություն են տվել նախագծային կազմակերպություններին, պրախոսել սեյսմիկ շրջան-

ներում կառուցվելիք օբյեկտների նախագծերը և համապատասխան առաջարկներ արել:

Շատ կայուն, ակտիվ է գործում սելավային և երևույթների դեմ պայքարելու գիտական խորհուրդը (Վ. Հ. Հովսեփյան), որը մի քանի հետաքրքիր առաջարկություններ է արել հակասելավային պաշտպանական միջոցառումների վերաբերյալ:

Առայժմ չի երևում երկրաշարժերի կանխագուշակման պրոբլեմային գիտխորհրդի գործունեությունը (ներսևսով): Ճիշտ է, պետք է խոստովանել, որ այն վերջերս է կադմակերպվել, րնդամենը մի քանի ամիս է: Գուցե ինչ որ աշխատանքներ կատարվել են, սակայն մենք դեռ չենք տեսնում:

Խորհուրդների անելիքների մասին ես կանգ կառնեմ զեկուցման վերջում:

Մի քանի խոսք Հայկական աշխարհագրական րնկերության մասին, որը մեր ակադեմիային ենթակա կազմակերպություն է: Ընկերությունը 1987 թ. շարունակել է հանրապետության տարածքի քարանձավների հաշվառման, չափագրման, ուսումնասիրման և քարտեզագրման աշխատանքները: Ուսումնասիրվել ու քարտեզագրվել են բազմաթիվ բնական ու արհեստական անձավներ Քասախի, Ամբերդի, Հրազդանի ու Մարմարիկի կիրճերում, Արագածի, Արայի, Մաղկունյաց ու Բազումի լեռնալանջերին, որոնց մի զգալի մասը հնագիտական ու պատմամշակութային լուրջ հետաքրքրություն են ներկայացնում: Ընկերության ուսումնասիրությունները քարանձավների բնագավառում դրական պնահատականի են արժանացել միութենական ու միջազգային գիտաժողովներում: Ընկերությունը գիտական կոնֆերանսներ է կադմակերպել աշխարհագրական գիտության առջև դրված խնդիրների և նրանց լուծման եղանակների սրուպագանդման նպատակով, դասախոսություններ ու զեկուցումներ են կարդացվել հանրապետության քաղաքներում ու գյուղերում:

Ակադեմիկոսների ու քվթակից անդամների գիտակազմակերպական գործունեության մասին

Մեր սեկցիայի կազմում գտնվող բոլոր ակադեմիկոսներն ու թղթակից անդամներն էլ հաշվետու տարում եռանդուն կերպով շարունակել են իրենց գիտական հետազոտություններն ու կադմակերպական գործունեությունը:

Ակադ. Ա. Տ. Ասլանյան—Մ. Սաթյանի հետ համատեղ հրատարակել է «Օֆիոլիտային գոտիների ձևավորման տեկտոնական պայմանները» մենսուրրոթյունը և տպագրության է հանձնել հոդվածներ գիտական տեղեկագրերում, զեկուցումներ է կարդացել գիտական նստաշրջաններում, հետազոտություններ կատարել (կամերալ և դաշտային) նավթի ու գազի որոնման ուղղությամբ: Հոդված է նախապատրաստել գալիք միջազգային երկրաբանական կոնգրեսին ներկայացնելու համար: Ղեկավարել է ինստիտուտի գիտակադմակերպական գործունեությունը:

Ակադ. Ա. Հ. Գաբրիելյան—Ինստիտուտի աշխատակիցների հետ կազմել է 1 : 200000 մասշտաբի տեկտոնական քարտեզի լեգենդը և կազմել առաջին բանվորական քարտեզը: Հոդված է ուղարկել գալիք միջազգային երկրաբանական կոնգրեսին, հոդվածներ է հրատարակել գիտական ամսագրերում: Ղեկավարել է երկրի մասին գիտությունների սեկցիայի և տեղեկագրի աշխատանքները:

Թղթակից-անդամ Գ. Ի. Տեր-Ստեփանյան—Ղեկավարել է ինժեներային երկրաբանության ու ջրաերկրաբանության պրոբլեմային գիտական խորհրդի աշխատանքները, հրատարակության է հանձնել «Գեոմեխանիկայի

պրոբլեմները» հողվածների ժողովածուն, շարունակել է հետազոտությունները սողանքների գեոդինամիկայի ասպարեզում:

Թղթակից-անդամ Ա. Բ. Բաղդասարյան—Ղեկավարել է աշխարհագրության բաժնի գիտակազմակերպական գործունեությունը: Հրատարակության է պատրաստել «Սովետական Հայաստանի բնությունը» մենագրությունը և «Սովետական Հայաստանի բնության գունալուսանկարների ալբոմը» աշխատությունը: Մեծ կազմակերպական աշխատանք է տարել գիտական կոնֆերանսներ ու նստաշրջաններ կազմակերպելու բնագավառում:

Թղթակից-անդամ Ի. Լ. Ներսեսով—Շարունակել է գիտակազմակերպական գործունեությունը ՍՍՀՄ ԳԱ երկրի ֆիզիկայի ինստիտուտում (որպես սեյսմաբանության բաժնի վարիչ, և սեյսմաբանության ու սեյսմակայուն շինարարության պրոբլեմային գիտխորհրդի նախագահի տեղակալ) և Գառնիի գիտակայանի սարքավորումների տեղադրման, մոնիթինգի և սարքավորման գործում: Կազմակերպական աշխատանքներ է կատարել միջուկային պայթեցումների վերահսկման Սովետա-Ամերիկյան հանձնաժողովի համատեղ աշխատանքներ կազմակերպելու բնագավառում: Գիտական հետազոտությունները կապված են եղել երկրաշարժերի կանխագուշակման նոր մեթոդների մշակման հետ, տպագրության է հանձնել 3 հողվածներ, ղեկավարում է 2 ասպիրանտների և զգալի թվով ստաժյորների:

Թղթակից-անդամ Ռ. Ս. Մովսեսյան—Շարունակվել են նրա ղեկավարությամբ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ինժեներային երկրաձևաչափության (գեոդեզիայի) ամբիոնում բարձր ճշտության չափող սարքերի ստեղծման ու նրանց ավտոմատացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Գառնիի գիտակայանում տեղադրված է մեր երկրում առաջին մեծ ճշտության հեռաչափային էտալոնային սարք, տարբեր տիպի (էլեկտրոնա-օպտիկական, լուսային և այլն) հեռաչափերի (հորիզոնական և ուղղաձիգ շարժումների չափման սարքերի) ստուգման և կարգավորման համար: Ամբիոնի լաբորատորիաներում և փորձնական գործարանում ստեղծվում են նոր սարքեր երկրակեղևի ուղղաձիգ շարժումների, կառուցվածքի և հիմքի դեֆորմացիայի չափումների ավտոմատացման համար: Խարկովի ավիացիոն գործարանում ներդրված է նոր հիդրոստատիկ սարք, զգալի նվաճում պետք է համարել նոր տիպի ավտոմատացված լուսային հեռաչափերի ստեղծման գծով տարվող հետազոտությունները:

Հնկ. Մովսեսյանը մեզ ներկայացրել է բավական մանրամասն տվյալներ ինժեներային երկրաձևաչափության, երկրակեղևի հորիզոնական և ուղղաձիգ շարժումների ուսումնասիրման համար սարքեր ստեղծելու ծրագիր, որը եւ հնարավորություն չունի անցնել լրիվ ներկայացնելու: Նպատակահարմար կլինի այդ հարցին հատուկ զեկուցում նվիրել բաժանմունքում:

Թղթակից-անդամ Ս. Վ. Գրիգորյան—Հրատարակել է «Առաջնային երկրաբանական եզրապատկերներ օգտակար հանածոների հանքավայրերի որոնման ու հետախուզման գործում» մենագրությունը, տպագրության է հանձնել «Շրջակա միջավայրի պահպանության հիմունքները» աշխատությունը: Նրա ղեկավարությամբ կազմվում է Երևան քաղաքի էկոլոգա-երկրաբանական քարտեզը, կազմվել է էկոլոգիական հետազոտությունների ծրագիր հանրապետության համար:

Թերութիւններ, առաջարկութիւններ

Ինչ խոսք, մեր աշխատանքներում կան և թերութիւններ գիտահետազոտական աշխատանքների պլանավորման, նպատակասլաց ուղղման, կադրերի պատրաստման, նրանց ճիշտ տեղաբաշխման, գիտական հետա-

դոտությունների կոորդինացման, լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով ապահովման և այլ բնագավառներում:

Մեր երկրում սոցիալ-տնտեսական զարգացման այժմյան փուլում, երբ առաջնակարգ նշանակություն է տրվում գեմոկրատացմանը, հրապարակայնությանը, վերակառուցմանը (բոլոր բնագավառներում, այդ թվում և դիտության) մեզանից պահանջվում է նման հաշվետու ժողովներում ավելի շատ խոսել թերությունների մասին, նպատակ ունենալով միջոցառումներ ձեռնարկելու նրանց վերացման, գիտական հետազոտությունների արմատական վերափոխման, նրանց ավելի բարձր մակարդակով կատարելու համար:

Կանգ առնենք այդ հարցերից մի քանիսի, մեր կարծիքով սուղիվ կարևորների վրա:

Վերադաս օրգանների որոշումների լույսի տակ գիտական հիմնարկների համար առաջնահերթ հարցերից մեկը դա վերակառուցումն է գիտական հետազոտություններում, ինստիտուտների հետազոտական պլաններում, նրանց կառուցվածքում: Ինչ չափով ենք մենք իրագործել այդ կարևոր առաջադրանքները:

Հաշվետու տարում վերանայվեցին ինստիտուտների կառուցվածքները և տեղի ունեցավ նոր ատեստավորում: Սակայն կառուցվածքի վերափոխման և ատեստավորման պրոցեսում (ևս ի նկատի ունեմ նրկրարանակսն գիտությունների ինստիտուտը) սխալներ ու անճշտություններ են թույլ տրվել: Ճիշտ է, պակասել է բաժինների ու լաբորատորիաների թիվը, սակայն նախկին բաժինների և լաբորատորիաների վերակառուցումը, նրանց միավորումը, առանձին լաբորատորիաների միացումը, կամ նորերի ստեղծումը ոչ միշտ են բխել գիտության շահերից, այլ երբեմն անձնական փոխհարաբերությունների արդյունք են հանդիսացել: Ատեստացիայի ժամանակ համարյա հաշվի չի առնվել գիտաշխատողների տարիքի և երիտասարդ կադրերի առաջ քաշման հարցերը, որոնք այժմ շատ սուր են դրվում վերադաս օրգանների կողմից: Ատեստացիայի հիմնական նպատակներից մեկի՝ առաջատար գիտաշխատողների աշխատավարձի բարձրացման հարցում ևս չէի ասի, որ այս սկզբունքը պահպանվել է:

Երիտասարդ կադրերով ինստիտուտը համալրելու հարցը դեռ մնում է ոչ բավարար չափով լուծված: Չի իրագործվում կառավարության կողմից կայացված որոշումն այն մասին, որ ինստիտուտները տարեկան առնվազն 5%-ով պետք է համալրվեն երիտասարդ կադրերով: Այս հարցում իհարկե կան նաև օբյեկտիվ դժվարություններ, որոնք մեզ բոլորիս հայտնի են, բայց պետք է ուղիներ գտնել դրանք հաղթահարելու համար:

Ավագ սերնդի, տարիքավոր բաժնի ու լաբորատորիաների վարիչների փոխարինումը երիտասարդներով մեր լսոջն դրված ամենակարևոր հարցերից մեկն է: Արդեն այսօր նման սերնդափոխման անհրաժեշտությունն առկա է:

Այս առիթով կրկին առաջ է գալիս բուհերի շնորհալի և ընդունակ շրջանավարտներին ինստիտուտներում բնագրկելու հարցը, կապը բուհերի հետ մոտիկից երիտասարդ կադրերին ծանոթանալու համար և այլ հարցեր:

Ինձ նման շատ մարդիկ վաղուց այն կարծիքին են, որ բուհերը և սովադեմիական գիտական հաստատությունները պետք է օրդանապես միավորվեն, ինչպես այդ տեղի ունի բարձր զարգացած կապիտալիստական երկրներում, մեզ մոտ մի այդպիսի օրինակ կա՝ դա Նալոսիբիրսկի համալսարանն է, որը միավորված է սկադեմիայի սիբիրյան բաժանմունքի հետ: Դա հնարավորություն կստեղծի ավելի բարձրորակ կադրերի պատրաստ-

մանր՝ մյուս կողմից Համալսարանի դասախոսական կազմի համար ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն գիտությամբ զբաղվելու: Այս դեպքում եվերանան նաև կոորդինացիայի հարցերը, որոնք առայժմ մեծ մասամբ ձևական բնույթ են կրում: Հատկանշական է, որ պրեզիդենտ Գուրի Իվանովիչ Մարշուկը Միութենական ակադեմիայի վերջերս տեղի ունեցած ընդհանուր ժողովում իր զեկուլցման մեջ խոսելով կադրերի պատրաստման ընդհանուր համակարգի և գիտության վերակառուցման հարցերի մասին, արտահայտեց այն միտքը, որ դրանց համագործակցման հիմնական մեթոդներից մեկը, զուցե և ամենակարևորը (ըստ նրա) նրանց միացումն է, իսկ թե ինչ ձևով դա պետք է իրագործվի, ցույց կտա ապագան:

Գիտական հետազոտությունների ավելի նպատակասլաց ուղղման, այժմեական գիտական պրոբլեմների մշակման, պրոբլեմներ, որոնց լուծումը բխում է մեր հանրապետության երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններից և միաժամանակ ժողովրդական տնտեսության հետադադարգացման պահանջներից, պետք է վերանայել ինստիտուտների թեմատիկ պլանները, և ապա դրան համապատասխան՝ նրանց կառուցվածքը: Ոչ թե պրոբլեմներն ու թեմաները հարմարեցնել գոյություն ունեցող գիտական ստորաբաժանումներին, այլ հակառակը՝ ինստիտուտների կառուցվածքը պետք է համապատասխանի պրոբլեմներին ու թեմատիկային: Իմ կարծիքով սա կլինի գիտական հետազոտությունների իսկական արմատական վերակառուցում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եկող տարիներից մեր ինստիտուտները ֆինանսավորվելու են տնտեսաշվարկային ձևով: Այստեղից կբրկին բխում է այն, որ մենք պետք է զբաղվենք այնպիսի գիտական պրոբլեմներիով, որոնց բնագավառում կայող ենք միության մասշտաբով առաջավոր (կամ առաջավորներից մեկը) լինել, որը ֆինանսավորման հնարավորություն կստեղծի (կիրառական երկրաբանական և դրա հետ կապված մագմատիկական երկրաբանություն և այլն):

Բարձրորակ կադրերի պատրաստման բնագավառում զգալի առաջադիմություն է նկատվում Երկրաֆիզիկայի ու ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում. մենք ունենք (վերջին տարիների ընթացքում) առաջին գիտության դոկտորը (Հովհաննիսյան Սևադա), իսկ մի քանի աշխատակիցներ էլ գիտերտադիաներ են ներկայացրել պաշտպանության:

Դժվարությամբ են կատարվում ասպիրանտուրայի ընդունելության պլանները, համարյա առանց կոնկուրսի. յուրաքանչյուր տեղի համար մեկ դիմում է եղել, այսինքն փաստորեն ընտրություն չի կատարվել:

Տարիներ շարունակ մեզ անհանգստացնում է գիտական հետազոտությունների կոորդինացման հարցը: Հայտնի է, որ ակադեմիայի վրա է դրված հանրապետության մասշտաբով գիտական հետազոտությունների կոորդինացիան: Հատուկ ապարատ է ստեղծված այդ նպատակի համար: Սակայն օբյեկտիվությունը պահանջում է ասել, որ համենայն դեպս մեր գիտության բնագավառում մենք դեռ հեռու ենք լիարժեք, իսկական կոորդինացիայից, չնայած զգալի ջանքեր են գործադրվում, մեծ մասամբ այն ձևական բնույթ է կրում: Այս գործում մեծ դեր ունեն մեր մասնագիտական գիտական խորհուրդները: Նրանք են, որ կոչված են ոչ միայն սրոշելու տվյալ գիտության հետադադարգացման ուղիները, հիմնական պրոբլեմներն ու թեմաները, այլև մատնանշելու այն գիտական հաստատությունները, որոնք պետք է մասնակցեն այդ պրոբլեմների մշակմանը կամ պրոբլեմների ու թեմաների առանձին մասերի, առանձին բաժինների մշակմանը, ելնելով նրանց կադրային ու նյութատեխնիկական հնարավորություններից: Համատեղ գիտական հաշվետվություններ, նրանց քննարկումը կոորդինացիոն գիտական խորհուրդ-

ներում, համատեղ հետադոտոթյուններ, այսինքն պիտի լինի իսկական կոորդինացիան: Նրկրի մասին պիտություների սեկցիայում մենք առայժմ ունենք 4 պրորլեմային խորհուրդներ՝ ինժեներային երկրաբանության ու ջրաերկրաբանության, սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության, սելավային երևույթների դեմ պայքարելու և երկրաշարժերի կանխագուշակման խորհուրդները: Ընդհանրապես այդ խորհուրդները վատ չեն աշխատում, ինչ որ գործեր անում են, սակայն, կրկնում եմ այդ մեզ դեռ չի բավարարում:

Միջավայրի, բնության պահպանման հարցերը, որոնք այժմ ամբողջ աշխարհում ուշադրության կենտրոնում են գտնվում, Հայաստանի նման խիտ բնակեցված ու փոքր տարածք պրադեցնող, խիստ սահմանափակ պիտանի հողատարածքների և ջրի սակավության պայմաններում, առավել կարևոր նշանակություն են ստանում:

Սողանքների, փլվածքների, և այլ քայքայիչ երկրաբանական պրոցեսների դեմ պայքարելու գիտականորեն հիմնավորված մեթոդների մշակումը, դրանց վերահսկումը, մեր գիտական հիմնարկների սուաջնահերթ հարցերից մեկը պետք է լինի: Ինժեներային երկրաբանության ու ջրաերկրաբանության գիտական խորհուրդը պետք է հսկի հանրապետությունում այդ բնագավառում տարվող աշխատանքները:

Բոլորն էլ գիտեն, որ ջրի պրորլեմը Հայաստանի համար ամենանեղ տեղերից մեկն է: Զուրը մեզ մոտ խիստ պակաս է, հավանաբար Միության մեջ մենք ջրով ապահովված լինելու տեսակետից ամենահետին տեղերից մեկն ենք գրավում: Մոտ 800 քաղցրահամ ջրերի և մոտ 700 հանքային ջրերի աղբյուրներ են հայտնաբերված: Բայց մենք ջրի պակաս ունենք: Ես ամբողջ հանրապետության մասշտաբով տվյալներ չունեմ, բայց նրան քաղաքի համար կարող եմ վստահորեն ասել, որ ջրի պակասը ջրատար սիստեմի անսարքության, բնակչության կուլտուրայի պակասության, անխիղճ, անտարբեր վերաբերմունքի հետևանք է:

Քաղաքի յուրաքանչյուր բնակիչ օրական ստանում է 450—500 լիտր ջուր, որը խնամքով օգտագործելու պայմաններում լիովին կարող է բավարարել 1,5 մլն. բնակիչ ունեցող քաղաքին: Իմ կարծիքով համարյա բացառված են քաղցրահամ ջրերի նոր պաշարների (աղբյուրների) հայտնաբերումը:

Այդ առումով ուշադրության են արժանի պրոֆ. Ս. Պ. Բալյանի հետադոտոթյունները լավային ծածկույթի տակ թաղված դետահովիտների հայտնաբերման և դրանցով հոսող ջրերի երկրի մակերես դուրս բերելու և օգտագործելու ուղղությամբ: Այդ հետադոտոթյունների արդյունքները այսօր արդեն առկա են (պալեոբանական), իսկ այդ ջրերի Արարատյան դաշտավայրի լանջերում, ավելի բարձր հիպսոմետրիկ նիշերում դուրս բերելը կնպաստի նաև Արարատյան արտեզյան ավազանի գրունտային ջրերի մակարդակի իջեցմանը, և դրանից բխող այլ հարցերի լուծմանը (ճահճների չորացում, և այլն):

Երկրաբանության ինստիտուտի ջրաերկրաբանության բաժինը պետք է ակտիվ մասնակցություն ունենա այս գործում: Բավական ծանր վիճակում է գտնվում Արարատյան արտեզյան ավազանը՝ ջրերի անխնա, անպլանային օգտագործումը (ավելի քան 2000 հորատանցքեր), հողերի ճահճացումը և այլն: Վերջին տասնամյակներում այդ ուղղությամբ (ճահճացած հողերի շորացման) տարվող աշխատանքները լրիվ չարդարացրին մեր սպասելիքները: Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը մեզ համար համազգային պրորլեմ է, որովհետև մենք ջրի ուրիշ նման մեծ շտեմարան չունենք, այս պրորլեմի լուծմանը մեր ակադեմիան իհարկե, պետք է մեծ ակտիվություն հանդես բերի:

Պետք է լրջորեն զբաղվել Ղափանի մետալուրգիական լաբորատորիայի հարցով: Ցավոք սրտի լաբորատորիայի հետաքրքիր առաջարկները անթափոն արտադրության կազմակերպման ուղղությամբ, որը հավանության է արժանացել վերադաս գիտական հաստատությունների կողմից դեռ չեն ևկանել ներդրվել:

Մոդա է դարձել խոսելը բնության պահպանման մասին, այն մասին, որ Նրևան քաղաքը օդի մաքրության տեսակետից մեր երկրի ամենակեղտոտ քաղաքներից մեկն է, իսկ ըստ որոշ հավաստի աղբյուրների՝ ամենակեղտոտն է: Քաղաքում կան կազմակերպություններ, որոնք այս հարցերով զբաղվում են, բայց դա մեզ չի բավարարում, անհրաժեշտ են կոմպլեքս հետազոտություններ: Ժամանակն է ստեղծելու մի գիտական օջախ, որի կազմում պետք է ներգրավված լինեն աշխարհագրագետներ, երկրաբաններ, բուսաբաններ, հողագետներ, ֆիզիկոսներ և այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ:

Դեմոկրատացման ու հրապարակայնության հարցերն իրենց արձագանքներն են գտել մեր ամսագրում: «Գիտություններ երկրի մասին» տեղեկագրում գործում է «Քննադատություն և բանավեճ» բաժինը, գրախոսվում են վերջին տարիներում հրատարակված մենագրությունները: Այս առիթով ես կրկին ուզում եմ անդրադառնալ մի հարցի, որի մասին տարիներ շարունակ խոսել ենք: Իա մեր գիտական տեղամիտարանության հարցն է, խոսքը վերաբերում է Հայաստանի երկրաբանությանը վերաբերող տեղեկանքներին: Միևնույն տարրերին տարբեր երկրաբաններ տարբեր անուններ են տալիս, երբեմն չի հասկացվում, թե ինչի մասին է խոսքը (Փամբակ-Ջանգեզուրի, Միսխանա-Ջանգեզուրի, Հանքավան-Ջանգեզուրի, ինչը որ նույնն է, Ղափանի մոնոկլինալ, Ղափանի անտիկլինորիում և այլն): Միթե մեր երկրաբանները, մոնոկլինալ և անտիկլինալ տեղամիտները միմյանցից չեն տարբերում:

Մի քանի տարի առաջ մենք ձեռնամուխ եղանք մի շնորհալի գործի՝ լայնկացանք կազմել փոքր մասշտաբի (միլիոնանոց, կեսմիլիոնանոց) նոր երկրաբանական և տեկտոնական քարտեզներ, որոնց կարիքը բոլորն էլ զգում են, ոչ միայն երկրաբաններն ու երկրաֆիզիկոսները, ինստիտուտները, այլև հարակից մասնագիտությունների ներկայացուցիչները (աշխարհագրագետները և ուրիշներ): Եվ մենք մտադիր էինք այդ առթիվ միասնական տեղեկանքներ ստեղծել: Այդ նպատակով հսնձնաժողով ստեղծվեց, սակայն այդ աշխատանքները ցավոք սրտի չավարտվեցին: Այժմ դրա կարիքը շատ մեծ է, որովհետև մեր հրատարակած փոքր մասշտաբի քարտեզները խիստ հնացել են և չեն համապատասխանում մեր գիտելիքների այժմյան մակարդակին: Ես կարծում եմ, որ պետք է վերադառնալ այս հարցին: Նույնը վերաբերվում է նաև մետաղագոյացման և մյուս մասնագիտացված երկրաբանական քարտեզներին:

Իհարկե, խոսքը վերաբերվում է փոքր մասշտաբի քարտեզներին, որոնք ոգտագործվում են բազմաթիվ մասնագետների կողմից: Միջին և խոշոր մասշտաբի քարտեզների կազմումը՝ դա իհարկե երկրաբանական վարչության դործն է: